ՀԿԱԾ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԿԱԾ-ԶԹ 2023/2

«27» փետրվարի 2023թ.

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը *(այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Ավագյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա,*

«Զեթ Թեքնոլոջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը *(այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Դ. Գիշյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.*

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխող ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն):

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան և ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանած պահանջներին չհամապատասխանող Ծառայություն.

ա) չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Կատարողից պահանջել վճարել պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը և հրաժարվել պայմանագիրը կատարելուց ու պահանջել վերադարձնել Ծառայության գումարը կամ մատուցված Ծառայությունը ընդունել մի մասով՝ համաչափորեն նվազեցնելով Պայմանագրի 4.1 կետով սահմանված վճարը և այդ վճարի ու Ծառայության ընդունված մասի դիմաց վճարման ենթակա գումարի տարբերությունը իր ընտրությամբ հետ պահանջելով կամ

հաշվանցելով Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված պայմանագրերով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

2.1.3 միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը.

2.1.4. միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ Կատարողին հատուցելով Պայմանագրից հրաժարվելու օրվա դրությամբ փաստաթղթերով հիմնավորված և Պայմանագրի կատարման նպատակով կատարված փաստացի ծախսերը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 քննարկել և ընդունել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության մատուցման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

2.2.3. Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը երրորդ անձանցից կախված լինելու դեպքում ապահովել Կատարողի հետ երրորդ անձանց համագործակցությունը: Կատարողը պատասխանատվություն չի կրում Պայմանագրով սահմանված պարտավորությունների՝ Պատվիրատուի կողմից այդպիսի համագործակցությունը չապահովելու հետևանքով առաջացած կետանցի համար:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները :

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ.

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես, իսկ գործընթացն այլ անձի նախաձեռնությամբ սկվելու դեպքում՝ այդ հանգամանքն իրեն ի հայտ դառնալուց հետո՝ անհապաղ, գրավոր տեղեկացնել Պատվիրատուին.

2.4.4 պահպանել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթները.

2.4.5. Ծառայությունը մատուցել պատշաճ որակով.

2.4.6.Ծառայության արդյունքը հանձնելու հետ մեկտեղ Պատվիրատուին

տեղեկատվություն հաղորդել Պայմանագրի առարկայի շահագործման և օգտագործման վերաբերյալ.

2.4.7. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար երրորդ անձանց կողմից խոչընդոտներ հարուցելու կամ պարտավորությունների կատարումը երրորդ անձանցից կախված լինելու պայմաններում այդ անձանց կողմից համագործակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին անհապաղ՝ բայց ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում հայտնել Պատվիրատուին: Սույն կետով սահմանված պարտավորությունը չկատարելու դեպքում Կատարողը զրկվում է Պայմանագրի կետանցի կամ այլ պայմանի խախտման դեպքում երրորդ անձանց կողմից համագործակցելուց հրաժարվելու կամ խոչընդոտներ հարուցվելու հիմքով պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունից:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ: ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2 Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Պայմանագրի N 3 հավելված):

3.3. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում (բացառությամբ Պայմանագրի 3.4 կետով սահմանված դեպքերի) և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Ծառայության մի մասը պատշաճ մատուցված լինելու, իսկ մյուս մասը՝ Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու, սահմանված ժամկետի խախտմամբ մատուցվելու, չմատուցվելու, այդ մասի մատուցման անհնարինության կամ այլ պատճառներով Ծառայության մի մասն ընդունելու անհնարինության դեպքում Ծառայությունը կարող է ընդունվել միայն պատշաճ մատուցված մասով: Մատուցված Ծառայությունը մի մասով ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ՝ Պայմանագրի 3.1 և 3.2 կետերով սահմանված կարգով:

3.5 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում

Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.6 Եթե պայմանագրի 3.5 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է չընդունված:

3.7 Արձանագրության ստորագրման պահից Պատվիրատուն սույն պայմանագրի հիման վրա մշակված (ստեղծված, կատարելագործված) համակարգի (համակարգչային ծրագրերի, ծրագրային մոդուլների) նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք՝ ներառյալ մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքները: Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի պահանջով անհապաղ վերջինիս հանձնել սույն պայմանագրի հիման վրա մշակված (ստեղծված, կատարելագործված) համակարգի (համակարգչային ծրագրերի, ծրագրային մոդուլների) ելակետային տեղեկատվությունը (SOURCE CODE-երը), որոնք անհրաժեշտ են Պատվիրատուի կողմից Ծառայության արդյունքի հետագա շահագործումն ապահովելու համար:

3.8 Կատարողը սույն պայմանագրի գնի շրջանակներում Պատվիրատուին տրամադրում է սույն պայմանագրով նախատեսված ծառայություններն առավել արդյունավետ մատուցելու նպատակով օգտագործվող (եթե օգտագործվել է) և իր կողմից ստեղծված «Z-FLOW» համակարգչային ծրագիրը *(հեղինակային իրավունքի օբյեկտն ի պահ է հանձնվել «Հայհեղինակ» հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող հասարակական կազմակերպությանը 2019 թվականի դեկտեմբերի 17-ին՝ N 08/5231 թվի ներքո)* ողջ ծավալով օգտագործելու անժամկետ իրավունք՝ առանց վերջինս առանց իր համաձայնության հատուցելի կամ անհատույց հիմունքներով այլ անձանց փոխանցելու իրավունք վերապահելու: Սույն կետով նախատեսված օգտագործման իրավունքը ներառում է նաև սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում և դրանից հետո Կատարողի կողմից Պատվիրատուի կամ նրա իրավահաջորդների անսահմանափակ քանակով աշխատակիցների կամ Պատվիրատուի ենթակա մարմինների աշխատակիցների համար «Z-FLOW» համակարգչային ծրագիրն օգտագործելու, շահագործելու և Պատվիրատուի, նրա իրավահաջորդների կամ ենթակա մարմինների բնականոն գործունեությունն իրականացնելու համար «Z-FLOW» ծրագրով կամ այդ ծրագրի օգտագործմամբ բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելու անժամկետ հնարավորությունը: Կատարողը պահպանում է «Z-FLOW» համակարգչային ծրագրի նկատմամբ հեղինակային և/կամ այլ իրավունքները և չի կրում դրա ելակետային տեղեկատվությունը (SOURCE CODE-երը) Պատվիրատուի առջև բացահայտելու, դրանք վերջինիս տրամադրելու պարտականություն: Սույն պայմանագրով «Z-FLOW» ծրագրի նկատմամբ Պատվիրատուին փոխանցվող իրավունքները չեն կարող մեկնաբանվել այլ կերպ, քան նկարագրված է սույն կետում:

3.9 Կատարողն իրավունք ունի սույն պայմանագրի գործողության ընթացքում «Z-FLOW» համակարգչային ծրագրում թարմացումները, փոփոխությունները, այլ բարելավումները և

ծրագրային սխալների ուղղումները կատարել առանց Պատվիրատուի համաձայնության, եթե դրանք կատարումը բխում են սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների որակը կամ Պատվիրատուի էլեկտրոնային համակարգում աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակից՝ ստանձնելով դրանց մասին Պատվիրատուին ողջամիտ ժամկետում նախապես տեղեկացնելու պարտականություն:

3.10 Կատարողը պարտավորվում է մինչև սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Պատվիրատուին օգտագործման իրավունքով հանձնվող «Z-FLOW» համակարգչային ծրագրում և այլ ծրագրային մոդուլներում որևէ թարմացում, փոփոխություն, համակարգային բարելավում կատարելու կամ ծրագրային որևէ սխալի ուղղում իրականացնելու դեպքում դրանք անհապաղ և առանց որևէ լրացուցիչ վճարի տրամադրել Պատվիրատուին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **21 600 000 (քսանմեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Սույն պայմանագրի 3.4 կետով սահմանված դեպքում Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության համար վճարման ենթակա՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված վճարը համաչափորեն նվազեցվում և հաշվարկվում է՝ հիմք ընդունելով պատշաճ մատուցված ծառայության և Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող ամբողջական ծավալով ծառայության հարաբերակցությունը: Պայմանագրի 4.1 կետով սահմանված գումարի և Ծառայության ընդունված մասի դիմաց վճարման ենթակա գումարի տարբերությունը Պատվիրատուի ընտրությամբ վերադարձվում է կամ հաշվանցվում է Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված այլ պայմանագրերով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

4.3. Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում լուծմանը նախորդող ժամանակատվածում վճարված գումարը Պատվիրատուի ընտրությամբ վերադարձվում է կամ հաշվանցվում է Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված այլ պայմանագրերով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

4.4 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Պայմանագրի N 2 հավելված) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից Պատվիրատուի օգտին Պատվիրատուի պահանջի հիման վրա գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից Պատվիրատուի օգտին Պատվիրատուի պահանջի հիման վրա յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6.2. Կողմը, որի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումն անհնարին է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, պարտավոր է Պայմանագրի մյուս կողմերին այդ մասին ծանուցել՝ անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքներն ի հայտ գալու պահից 3-օրյա ժամկետում:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

7.2. Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.3 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.4 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.7 Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների

կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.8 Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.9 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.10 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.11 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.12 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.13 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.gnumner.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված կարգով հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	«ԶԵԹ ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ
ք.Երևան, Հալաբյան 41ա	ք.Երևան, Սիսակյան 22, բն. 106
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 900011288025	Հ/Հ 1570077243600100
կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.S.

Հավելված N 1
« » _____ 2023 թ. կնքված
ՀԿԱԾ-ՀԹ 2023/2_ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

I. **Պետական եկամուտների կոմիտե.**
1) պարտապանի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով հարցումներ.

II. **Ոստիկանություն.**
1) անձնագրային և վիզաների վարչությունից պարտապանի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով հարցումներ.
2) Ճանապարհային ոստիկանությունից պարտապանի և (կամ) նրա գույքի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով հարցումներ.
3) հետևյալ որոշումների վերաբերյալ հաղորդագրություններ.
   a) պարտապանի առկա և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա արգելանք դնելու.
   b) պարտապանի գույքի վրա դրված արգելանքը վերացնելու.
   c) պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու.
   d) պարտապանի գույքի նկատմամբ հայտարարված հետախուզումը դադարեցնելու.
4) պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումների կատարման վերաբերյալ հաղորդագրություններ:

III. **Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե.**
1) պարտապանի և (կամ) նրա գույքի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով հարցումներ.
2) հետևյալ որոշումների վերաբերյալ հաղորդագրություններ.
   a) պարտապանի առկա և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա արգելանք դնելու.
3) պարտապանի գույքի վրա դրված արգելանքը վերացնելու.պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումների կատարման վերաբերյալ հաղորդագրություններ:

IV. **Սոցիալական ապահովության ծառայություն**
1) պարտապանի դրամական վճարներ ստանալու վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով հարցումներ.
2) հետևյալ որոշումների վերաբերյալ հաղորդագրություններ.

a) պարտապանի կողմից ստացվող դրամական վճարների վրա բռնագանձում տարածելու:

V. **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն.**

1) ֆիզիկական անձի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով հարցում:

VI. **Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն.**

1) պարտապանի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով հարցում:
2) պարտապանի առկա և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա արգելանք դնելու.
3) պարտապանի գույքի վրա դրված արգելանքը վերացնելու.

VII. **Առևտրային բանկեր, (նույն ֆունկցիոնալը անհրաժեշտության դեպքում ակտիվացնել վճարահաշվարկային համակարգերի, պարտապանի դրամական միջոցները տիրապետող այլ կազմակերպությունների համար).**

1) հետևյալ հաղորդագրություններ.
   a) պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշման վերաբերյալ.
   b) պարտապանի արգելադրված միջոցների վերաբերյալ.
   c) պարտապանի դրամական միջոցների վրա բռնագանձնում տարածելու որոշման վերաբերյալ.
   d) պարտապանի միջոցների բռնագանձման վերաբերյալ.
   e) պարտապանի արգելադրված դրամական միջոցները մասնակի կամ ամբողջությամբ արգելանքից ազատելու որոշման վերաբերյալ:

VIII. **Կենտրոնական դեպոզիտարիա.**

1) տվյալներ ստանալու նպատակով հարցումներ.

IX. **Տվյալների փոխանակում.**

1) Երևանի քաղաքապետարանի հետ՝ վարչական ակտերի վճարումների վերաբերյալ.
2) Կենտրոնական գանձապետարանի վճարումների վերաբերյալ.
3) Ոստիկանության, Ոստիկանության «ՃՈ» ծառայության և Պարեկային ծառայության հետ՝ վարչական ակտերի վճարումների վերաբերյալ.
4) «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի և Պատվիրատուի միջև՝ կատարողական վարույթի շրջանակում կայացված որոշումների փոստային առաքման առնչությամբ:

X. **Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում.**

1) Պատվիրատուի և ՊԵԿ-ի միջև.

2) Պատվիրատուի և Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության միջև.
3) Պատվիրատուի և Երևանի քաղաքապետարանի միջև.
4) Պատվիրատուի և վարույթի մասնակիցների միջև (Անձնական կաբինետի միջոցով):

XI. Ծրագրային սպասարկում հետևյալ հարցերում՝

1) հաշվետվություններ և դրանց տպման ձևեր.
2) Համակարգի տեղեկատվության անվտանգ տարանջատում՝ ըստ Պատվիրատուի կառուցվածքային ստորաբաժանումների.
3) ՎԵԲ սերվերների աշխատանքային անընդհատություն.
4) տվյալների հիմնական շտեմարանի և ռեզերվային շտեմարանի միջև աշխատանքների անընդհատություն.
5) ֆիզիկական անձանց կաբինետի WEB մոդուլ.
6) իրավաբանական անձնանց կաբինետի WEB մոդուլ.
7) Անձնական կաբինետում գրանցված անձանց էլեկտրոնային ծանուցման մոդուլ,
8) Հայաստանի Հանրապետությունից ելքի թույլտվությունը սահմանափակված, հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկությունների որոնման մոդուլի մշակում.կատարողական վարույթների ավտոմատ մակագրման մոդուլ.
9) հարկադիր կատարման ենթակա վարչական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի համակարգի մոդուլ.
10) բանկային հարցումների, արգելանքների, բռնագանձումների և ազատումների ինքնաշխատ մոդուլների հետագա կատարելագործում՝ այն հաշվով, որ հնարավորինս նվազեցվի մարդկային գործոնը.
11) անհրաժեշտության դեպքում Համակարգում գործող մոդուլների փոփոխությունների ու լրացումների կատարում:

XII. Վճարումների մշակումների պարբերական գործարկում.

XIII. Խորհրդատվության տրամադրում մոդուլների կարգաբերման հարցերում.

XIV. Պատվիրատուի աշխատակիցների վերապատրաստում՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված քանակով և պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամսվա ընթացքում վերապատրաստման մեկ դասընթաց (Պատվիրատուի պահանջի առկայության դեպքում)՝ Պատվիրատուի ոչ ավելի, քան երկու աշխատակցի համար:

XV. Համակարգերի ինտեգրում «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) էլեկտրոնային համակարգի հետ:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհան. քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետ**
1	72261160/2	Տես վերևում	դրամ	21 600 000 (քսանմեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ	1	ք.Երևան Հալաբյան 41ա	գործում է մեկ տարի ժամկետով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ք.Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900011288025
կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՋԵԹ ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ
ք.Երևան, Սիսակյան 22, բն. 106
ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 1570077243600100

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«___» _____ 2023 թ. կնքված
***ՀԿԱԾ-ԶԹ 2023/2** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը ՀՀ դրամ
1	72261160/2	**Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ**	2.160.000	2.160.000	7.128.000	7.128.000	7.128.000	17.496.000	17.496.000	17.496.000	21.600.000	21.600.000	21.600.000	21 600 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ք.Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
ՀՀ 900011288025

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ք.Երևան, Սիսակյան 22, բն. 106
ՀՎՀՀ 00125657
ՀՀ 15700072436001000

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3

«___» _____ 2023 թ. կնքված

ՀԿԱԾ-ԶԹ 2023/2 *ծածկագրով պայմանագրի*

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
ՀՀ _____	ՀՀ_____
_____	_____
ՀՎՀՀ _____	ՀՎՀՀ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2023թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 23 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն, ի դեմս _____ և
Կատարողը, ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 23 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N __ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայության							
	անվանումը	տեխնիկա-կան բնութագրի համառոտ շարադրան-քը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակա-ցույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակա-ցույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____ ազգանուն, անուն

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈԼԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԸՆԴՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ARMAUTHOR"
Non-governmental collective management organization of copyright and related rights

"АРМАВТОР"
Общественная организация по коллективному управлению авторскими и смежными правами

N 07/520
19.12.2019թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

ԳԻՇՅԱՆ ԴԻԱՆԱ ՄԱՐԻԵՎԻ
«ԶԵԹ ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի տնօրեն
Հասցե- ք.Երևան, Միասկյան 22, բն.106
Հեռ.- +374 77 71-86-10
Անձնագիր- 000739565,012,27.08.2013թ.

ՀՀ «Հայհեղինակ» կազմակերպությունը տեղեկացնում է, որ **Դիանա Գիշյանի** կողմից ներկայացված՝

« Z - FLOW »

անվանումով համակարգչային ծրագիրը ի պահ է վերցված կազմակերպությունում 2019թ. դեկտեմբերի 17 -ին N 08/5231 թվի ներքո:

«ԶԵԹ ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն **Դիանա Գիշյանի** հավաստում է, որ այն հանդիսանում է վերոնշյալ ծրագրի նկատմամբ իրավատերը, ինչպես նաև, որ ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են, համապատասխանում են իրականությանը և այլ անձանց իրավունքներն իր կողմից չեն խախտվել:

Որևէ անձ, ով գիտակցաբար կեղծիք է թույլ տալիս նյութը ի պահ հանձնելու ընթացքում, կենթարկվի պատասխանատվության օրենքով սահմանված կարգով /Հիմք՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ.65-69/:

ՏՆՕՐԵՆ Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, 375009 Երևան, Կորյունի փող. 19ա Հեռ. +374 52 63 93, Հեռ/Ֆաքս. + 374 52 94 92
Республика Армения, 375009 Ереван, ул. Корюна, 19а Тел. +374 1 52 63 93 Факс: +374 1 52 94 92
19a Koryun str., 375009 Yerevan, Republic of Armenia Tel.:+374 1 52 63 93 Tel/Fax: +374 1 52 94 92
http://www.armauthor.am e-mail: international@armauthor.am